ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերի 15-16-ը Արաբական Միացյալ Էմիրությունների քաղաք Աբու Դաբի կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Վահան Քերոբյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ Էկոնոմիկայի նախարար

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Արաբական Միացյալ Էմիրություններ, ք. Աբու Դաբի, 2023թ. հոկտեմբերի 15-16-ը

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD) գլխավոր քարտուղար Ռեբեկա Գրինսփան
Ներդրումային համաշխարհային ժողովի հիմնադրամ (AIM Global Foundation)

5. Գործուղման նպատակը՝

Համաշխարհային ներդրումային ութերորդ համաժողովին (8th World Investment Forum) մասնակցություն

6. Քննարկված թեմաները՝

- ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման նոր հնարավորությունների վերաբերյալ հարցեր,
- Սաուդյան Արաբիայի հետ համագործակցությունը ընդյալնելու վերաբերյալ հարցեր
- Արաբական Միացյալ Էմիրությունների հետ համագործակցությունը ընդյալնելու և նախագծերում որպես համաներդրող ներգրավելու վերաբերյալ հարցեր
- Հայաստանը Պետություն-մասնավոր գործընկերության համաշխարհային ասոցիացիայի անդամ դառնալու վերաբերյալ հարցեր,

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱՄԷ Աբու Դաբի քաղաքում ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսի (UNCTAD) Համաշխարհային ներդրումային ութերորդ համաժողովի (այսուհետ՝ Համաժողով) շրջանակում նախարար Վահան Քերոբյանը մասնակցել է Համաժողովի հանդիսավոր բացման արարողությանը, որին մասնակցել են շուրջ 7000 մասնակից 160 երկրներից: Մասնակից երկրների լանդշաֆտը ներառում է համաշխարհային ներդրումային համայնքի բարձր մակարդակի մասնակիցներ, այդ թվում՝ պետությունների և կառավարությունների ղեկավարներ, նախարարներ, համաշխարհային ընկերությունների և ֆոնդային բորսաների ղեկավարներ, հիմնադրամների կառավարիչներ, ներդրումների խթանման գործակալությունների ղեկավարներ, ներդրումների տեղակայման միջազգային փորձագետներ, ականավոր գիտնականներ և այլն: Համաժողովի հիմնական նպատակը միջազգային տնտեսական կառավարման մեջ ներդրումային ինստիտուցիոնալ բացը լրացնելն է:

Նախարար Վահան Քերոբյանը հոկտեմբերի 16-ին ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբիում Համաշխարհային ներդրումային 8-րդ համաժողովի շրջանակում հանդիպել է Սաուդյան Արաբիայի Ներդրումների կարգավորման և քաղաքականության զարգացման գծով նախարարի տեղակալ Բաքեր Ալիաբուբի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են երկու երկրների միջև համագործակցության ու ներդրումային ծրագրերի իրականացման հնարավորությունները, մասնավորապես՝ արդյունաբերության, արևային էներգիայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և զբոսաշրջության ոլորտներում: Բաքեր Ալիաբուբին հանդիպման ընթացքում ընդգծել է, որ փոփոխվող աշխարհում շուկան ևս փոխվում է և պետք է կարողանալ հարմարվել փոփոխություններին, քաղել դրանից առավելագույնը ու ճիշտ օգտագործել միմյանց պոտենցիալը, ուստի Սաուդյան Արաբիան հետաքրքրված է իրենցից հյուսիս գտնվող երկրներով, մասնավորապես Անդրկովկասով: Այդ երկրների ցանկում նրանք նախանշում են նաև Հայաստանը, որին ի պատասխան Վահան Քերոբյանը ընդգծեց, որ ի տարբերություն տարածաշրջանի երկրների, Հայաստանը ունի աշխարհագրական բարենպաստ դիրք և կարող է կամուրջ հանդիսանալ Մերձավոր Արևելքի և ԵԱՏՄ անդամ-երկրների՝ որպես ԵԱՏՄ անդամ պետություն ու Արևմուտքի երկների միջև: Այդ թվում, նախարարը ներկայացրեց Հայաստանի տնտեսության ոլորտում գրանցած հաջողությունները, մոտ ապագայում նախատեսվող աճը և արտահանման ծավալներն ու արտահանման աշխարհագրությունը: Հետագա հարաբերությունները առավել խորացնելու և ներդրումների ոլորտում համագործակցություն իրականացնելու հետ կապված հանդիպման ընթացքում Նախարար Վահան Քերոբյանը առաջարկեց որպես հանդիպման շարունակություն դիտարկել նաև նախարարի տեղակալի հետ հանդիպում, ով հոկտեմբերի 23-25-ը լինելու է Սաուդյան Արաբիայում և մասնակցելու է Ապագա ներդրումային նախաձեռնության 7-րդ համաժողովին:

Նախարար Վահան Քերոբյանը ԱՄԷ մայրաքաղաք Աբու Դաբիում Համաշխարհային ներդրումային 8-րդ համաժողովի շրջանակում հանդիպում է ունեցել ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) գլխավոր քարտուղար Ռեբեկա Գրինսպանի հետ: Հանդիպմանը նախարարը UNCTAD-ի գլխավոր քարտուղարին ներկայացրել է Հայաստանի տնտեսության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունն ու առաջնահերթությունները, ոլորտում վերջին շրջանում գրանցվող աճի բարձր ցուցանիշները, որին ի պատասխան Ռեբեկա Գրինսպանը նշեց, որ ողջունելի է Հայաստանի վարած բարեփոխումների

քաղաքականությունը և այն կարելի է որպես օրինակ ներկայացնել: Անդրադառնալով Հայաստանում ուղղակի օտարերկրյա ներդրումներին՝ Վահան Քերոբյանն ընդգծեց, որ այս ուղղությամբ հատկապես վերջին տարում Արաբական Միացյալ Էմիրությունների ունեցած դերը շատ ծանրակշիռ է: Հանդիպման ավարտին Ռ. Գրինսպանը առաջարկեց հետագայում էլ մասնակցել UNCTAD-ի կազմակերպած միջոցառումներին և նշեց, որ կարևորում են Հայաստանի մասնակցությունը:

Նախարար Վահան Քերոբյանն Աբու Դաբիում հանդիպում է ունեցել ԱՄԷ արտաքին առևտրի պետական նախարար Թանի բին Ահմեդ Ալ Զայուդիի հետ: Քննարկվել են ներդրումային ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր: Վահան Քերոբյանը ներկայացրել է Հայաստանի տնտեսության ոլորտում գրանցվող առաջընթացը: Վ. Քերոբյանը կրկին ընդգծել և կարևորել է Հայաստանի օտարերկրյա ուղղակի ներդրումներում Էիրությունների դերը: Հանդիպման ընթացքում ներկայացվեց արտահանման ծավալների և զբոսաշրջության աճը: Կողմերն անդրադարձան նաև այն ծրագրերին, որտեղ էմիրաթական կողմը կարող է հանդես գալ որպես համաներդրող: Հատկապես նմանատիպ ծրագրերից կարևորվեց Հայաստանում «չոր նավահանգիստ» ստեղծելու նախագիծը: Ի հավելումն Վ. Քերոբյանը առաջարկեց քննարկել այս ուղղությամբ ևս համագործակցելու հնարավորությունները: Բացի այդ, Վ. Քերոբյանը առաջարկեց խորացնել հարաբերությունները արդյունաբերության, մասնավորապես մշակող արդյունաբերության, զբոսաշրջության, արևային տեխնոլոգիաների ոլորտում: Նախարարը ընդգծեց նաև տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում համագործակցության և փորձի փոխանակման կարևորությունը:

Զրուցակիցները հանդիպման ավարտին պայմանավորվեցին տեղեկատվություն փոխանակել երկուստեք հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Նախարար Վահան Քերոբյանը, նախարարի տեղակալ Նարեկ Տերյանը և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի տնօրեն Լևոն Օհաննեսյանը հանդիպել են ՊՄԳ համաշխարհային ասոցիացիայի նախագահ Զիադ-Ալեքսանդր Հայեկի և գլխավոր տնօրեն Ժան-Քրիստոֆ Բարտ-Կուլարեյի հետ:

Նախարարը ներկայացրեց Հայաստանի պետություն-մասնավոր գործընկերության ոլորտում օրենսդրական բարեփոխումները, որ դրական ազդեցություն ունեն ոլորտի զարգացման համար: Ներկայացվեց Պետություն-մասնավոր գործընկերության օրենսդրական դաշտը, նախագծերի իրավական ուղղությունները, իրականացման չափանիշները, ընթացակարգերը, կառավարման ինստիտուցիոնալ շրջանակներն ու կիրառելի սկզբունքները: Այդ թվում նախարարը ներկայացրեց պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերի շրջանակում մատուցվող հանրային ծառայությունների ոլորտները: Վ. Քերոբյանը նշեց, որ ՊՄԳ իրավահարաբերությունների օրենսդրական կարգավորումը միտված է ՀՀ–ում արդյունավետ ՊՄԳ ծրագրերի վերհանմանը, մշակմանը, իրագործմանը, խթանմանը և կառավարմանը, ինչպես նաև ՊՄԳ ծրագրերի տվյալների բազայի (PPP DATABASE) ստեղծմանը և ինստիտուցիոնալ միջավայրի ձևավորմանը:

Միևնույն ժամանակ, պարոն Հայեկին ներկայացրեց ասոցիացիայի գործունեության շրջանակը, առաջարկեց, որ Հայաստանը ևս դառնա ասոցիացիայի անդամ երկիր, որը հնարավորություն կտա տրամադրել խորհրդատվություն, փորձի փոխանակում, մշակված ռազմավարությունների և լուծումներից օգտվելու, ասոցիացիայի կազմակերպած միջոցառումներին մասնակցելու հնարավորություն: Հանդիպման ավարտին նախարարը նշեց, որ կքննարկեն ասոցիացիային միանալու

հարցը և անհրաժեշտության դեպքում կսկսեն ասոցիացիայի անդամ երկիր դառնալու գործընթացը:

Ի հավելումն վերոգրյալին, Համաժողովին Հայաստանը մասնակցում է ազգային տաղավարով, որտեղ Էկոնոմիկայի նախարարության և «Ներդրումների աջակցման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչները տրամադրում են խորհրդատվություն, նաև տեղեկատվություն Հայաստանի ներդրումային միջավայրի և ներդրումային ծրագրերի շրջանակներում տրվող աջակցության ծրագրերի վերաբերյալ, փոխանակվում են կոնտակտներով՝ հետագա համագործակցությունը շարունակելու համար:

ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսի Համաժողովը բացառիկ հնարավորություն է ընձեռում ազդելու ներդրումների հետ կապված քաղաքականության մշակման վրա, ձևավորելու համաշխարհային ներդրումային միջավայրը և կապ հաստատելու բիզնեսի և քաղաքականության համաշխարհային առաջնորդների հետ:

Այսպիսով, Համաժողովին մասնակցությունը նպատակ ունի խրախուսել օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը Հայաստան, բարձրացնել Հայաստանի հեղինակությունը միջազգային հարթակներում՝ որպես ներդրումների համար գրավիչ ուղղություն, զարգացնել օտարերկրյա պետությունների հետ առևտրատնտեսական կապերը և ձևավորել ինստիտուցիոնալ հարաբերություններ բիզնեսի աջակցման գործընկեր կառույցների հետ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Սաուդյան Արաբիայի Ներդրումների կարգավորման և քաղաքականության զարգացման գծով նախարարի տեղակալ Բաքեր Ալիաբուբի հետ հետագա հարաբերությունները առավել խորացնելու և ներդրումների ոլորտում համագործակցություն իրականացնելու համար՝ որպես հանդիպման շարունակություն, որոշվեց հոկտեմբերի 23-25-ը ընկած ժամանակահատվածում Սաուդյան Արաբիայում հանդիպել ներդրումային նախաձեռնության 7-րդ համաժողովին մասնակցող Նախարարի տեղակալ Նարեկ Տերյանի հետ:

ԱՄԷ արտաքին առևտրի պետական նախարար Թանի բին Ահմեդ Ալ Զայուդի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն իրականացվող ծրագրերի վերաբերյալ երկուստեք տեղեկատվության փոխանակում իրականացնել:

ՊՄԳ համաշխարհային ասոցիացիայի նախագահ Զիադ-Ալեքսանդր Հայեկի հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն քննարկելու և քայլեր ձեռնարկելու Հայաստանը ՊՄԳ համաշխարհային ասոցիացիայի անդամ դառնալու գործընթացը սկսելու ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

18.10.2023թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 1009-Ա որոշման առ 10.10.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Վահան Քերոբյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2023 թվականի հոկտեմբերի 15-16-ը**

5. Գործուղման վայրը՝ Արաբական Միացյալ Էմիրություններ **(Աբու Դաբի)**.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[x] ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Վահան Քերոբյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	219,985	219,985
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար Աբու Դաբի (արտարժույթով, USA) 170$*60%	102.0	
	Վճարը 1 օրվա համար Աբու Դաբի (դրամ)	40,566	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	**81,133**	**81,133**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար Աբու Դաբի (արտարժույթով, USD)	145	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	57,668	
	Օրերի քանակը	2	
	Ընդամենը (դրամ)	**115,336**	**115,336**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**416,454**	**416,454**

*24.10.2023թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1USD=402.21 դրամ

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ